



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տպածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առևտելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19.989

ՀՅԱՀ  
ՊԱՅ

ԱՆՈՒՇ

ՇՐՋԱԴՐՁ



1 9 5 1

ՊԵՏՎՐԱՏ



ՅԵՐԵՎԱՆ

891.33

U-64

20 APR 2006

U. S. A. L.

19 NOV 2010

T E Q U A T U E Q E

(A, B, C, D, E)



---

9 b 8 4 P U S

1 9 3 1

8 b 1 b 4 U N

13.02.2013

19.989

1

Ժողովը աղմկալից եր: Ներկա յեղողներից ամեն մեկը ցանկանում եր խոսել, ու միանգամից տասնյակ ձեռներ չորս կողմից վերև բարձրացած ձայն ելին խընդում նախագահից:

Որակարգում դրված հարցը՝ բերքի հավաքը՝ բոլորին ել հուզում եր: Զարուհին, վոր առաջին անգամ այսոր ժողովի նախագահ եր ընտրվել, չգիտեր ինչ անել: Տասնյակ մատները նրան շլացնում ելին, գլուխը շշմեցնում: Մեկին նա ձայն եր տալիս, մյուսը դոռուս ինչքան ուժը պատում եր՝

Ցես նրանից առաջ եմ ձայն ուզել:

Նախագահ Զարուհին բարկանում եր, հոնքերը կիսում, շրթունքներն ուղցնում, բայց յերբ տեսնում եր, վոր իր բարկությունը վոչ մի ազգեցություն չի թողնում ժողովականների վրա՝ արդեն մեղմ ու հանգիստ յեղանակով ասում եր.

— Համբերիք, հերթը քեզ ել կհասնի խոսելու: Մի հինգ րոպէ լուռ լսում են՝ նորից ժողովն իրար և անցնում:

— Նախագահ, ինձ մի ձայն տուր, — լսում ե մի հաստ ձայն համար շարքերից,

— Մի խանգարիք, թող խոսքս վերջացնեմ, — բարկանում ե Սուրենը:

Վասիլ սոցիալիզմի գեղեցիքի և, ինչժամ նրա

Պետքատի տպարան  
Գլուխ. № 6609 (р)  
Փատվեր № 3331  
Հրատ. № 1699  
Տիրած 4000



4611-84

3

անունը գրել եք բրիգադի ցուցակում, — վրդովկում են  
մի քանիսը:

— Նա արդեն կուլակ Սանգրոյի ինամին ե զա-  
ռել ու ամեն որ նրա զուռնի տակ պար ե գալիս...  
ինչին ե պեաք նրան կոլխողը, — հեգնում ե տեղից Ռ-  
հանը:

Նախագահը մի քանի անգամ ձեռով պինդ խփում  
ե սեղանին, փարպեսզի լոկցնի աղմկողներին: Բայց ի-  
զուր: Աղմուկը շարունակվում ե, հարեանը հարեանի  
հետ խոսում ե, մեկը բարձր-բարձր ծիծաղում է:

Կոլխոզի գրասենյակը այսոր լեռ ու դեսի մեջ ե:  
Նստարան չինելու պատճառով շատերը նստոտել են  
ծալապատիկ գետանին: Աղմողջ սրահը լցված ե ծխա-  
խոտի ծխով: Ոճուքից կախված լամպը հաղիվ լուսա-  
վորում ե գրասենյակի կեսը:

Հերթից գուրս խոսք ե վերցնում Աննիկը:

— Բնկերներ, Զարուհուն նախագահ ենք ընտրել,  
լուր մնանք, վոր նա ժողովը կառավարի:

Զարուհին քթի տակ ժպտաց ու գլխի սպիտակ  
թաշկինակն ուղղեց: Նա զգաց, վոր ինքն անողնական  
չե, Աննիկի խոսքերն ուժ ներշնչեցին: Նա ամրապնդվեց  
ու հպարտացած դիմեց ժողովականներին.

— Ես զալմաղալ ժողովին ուրիշ նախագահ ընտրե-  
ցեք, ուժո չի պատի, — ասաց ու նստեց հաստ մեջքը  
թինկ տալով նստարանի թիկունքին:

Մի պահ ժողովականները լոեցին ու բոլորի  
հայցքը մեխվեց նախագահի սեղանին:

— Լավ, լավ, Զարուհի խոսքին վոչ, վեր կաց:

Զարուհին կրկին վեր կացավ ու իրկու ձեռքով  
հենված սեղանին՝ շարունակեց ժողովը կառավարել:

— Խոսելը արվում ե կոլխոզի նախագահին:

Բարձր հասակով, սեղանի մոտ կանգնած եր Լե-  
վոնը: Նա ձեռքի մի թեթև շարժումով ճակատից հե-  
ռացրեց գլխի հարուստ մազերը, արձակեց մոխրագույն  
խալաթի ոճիքը և սկսեց: —

— Ընկերներ, այսոր մենք զբուղում սոցիալիզմի  
հիմք ենք դնում, յերկու վրաով պինդ կանգնենք, վոր  
վոչ վոք տեղից չկարողանա մեղ շարժել:

— Վախիլ մի, մեր վրաները շատ ծանր են, — տե-  
ղից բարձր ձախով բացականչեց Սուրենը:

Նրա այդ խոսքերի վրա բոլորը միասին հրնա-  
ցին: Ժողովը նորից աշխատացավ:

Լեռնը վոգեորգած շարունակեց: —

— Իերքի հավաքին մեղանից ամեն մեկը հար-  
վածային պետք ե աշխատի.. չպետք ե թուլամորթ լի-  
նել: Պիտի դիմանալ դժվարություններին:

Գրիգոր բիձան, վոր նստել եր հետին շարքերում,  
արգեն սկսել եր հորանջել. այդ նկատեց Զարուհին ու  
կամացուկ Լեռնին նախագուշացրեց, վոր գեկուցումը  
շատ ե յերկարում:

Լեռնը նեղացավ, քթի տակ մրթմբթաց ու դար-  
ձալ շարունակեց:

— Մի ժամ ե խոսում ես, կշտացալը վոչ խսի-  
ւոց, նկատեց Զարուհին ծիծաղով:

— Յես բան չհասկացա, — մրթմբթաց Գրիգոր բի-  
ձան ու դժոհությունից դեմքը ծամածոեց:

— Ի՞նչ չհասկացար... Կոլեկտիվի արտերը հա-  
սել են, վոսկեգույն հասկերը մեղ են սպառում, — բա-  
ցարեց Լեռնը:

— Հա, եղ հասկացա, յես գերանդիս վաղեց ու-  
րիւ եմ:

— Յա ասում ես վոչինչ չհասկացմ, — այս ու այն կողմից լսվեցին ուրախ բացականչություններ:

— Դե շուտ վերջացրեք, զիշերն անցավ, ել յերը քնինք, վոր առավոտ կանուխ հանդը գնանք, — նորից դժոննեց Գրիգոր թիձան ու չարացած հայացքով մերթ Լևոնին նայեց, մերթ նախազահին, կարծիս ուզում եր ասել — յես ես բանից գլուխ չեմ հանի, աչքերիս քունը յեկել ու:

Աննիլը, վոր նստած եր Զարուհու կողքին, աջ ձեռքը զրած ճնոտին, հափշտակված, հայացքը չեր հեռացնում Լևոնից. Նրա ամեն մի շարժումը, զեմքի արտահայտությունը խոր ակոսներ ելին թողնում նրա սրտի խորքում: Մայրամբ զունչը ցցել, հետեւմ եր Աննիկին:

Ավանն իր ճառը վերջացրեց, ձեռքով սրբեց ճակատի քրատինքը և թեքվելով Աննիկի կողմը՝ նրա ականջին կամաց:

— Լավ ճառ ասել եմ սովորել, չե՞, — ասաց ներքին: Գոհունակությամբ:

Աննիկը մեկ ել նայեց Լևոնին ու զգաց, վոր ներքին մի նոր զգացում իրեն ավելի մռտեցրեց զեպի նու: Բայց նա նույն այդ վայրէկյանին իրենից հետ վանեց այդ միտքը և կրկին ուշադրությունը կենտրոնացրեց ժողովին:

— Նախազահ, մի հարց ունեմ, — լսվեց Տիմկոյի ձախը: Բոլորն ել նայեցին Տիմկոյին, նրան լավ ճանաչում ելին: Նիհար դեմքով, այտոսկրները դուրս ցցված մերիտասարդ եր: Գլխին ուներ ծածկած մոխրագույն հնամաշ մի գլխարկ, վոր յերբեք չեր հանում: Ճատ հազիվ եր ծիծաղում, բայց յերբ ծիծաղում եր՝ այտերի վրա ահազին ծալքեր ելին զոյանում:

— Յա նրանց բանը վոնց պիտի լինի, վոր տանը աշխատող ձեռք չունեն, — հարցրեց նա շատ լուրջ լեղանակով, յերկու թեփով հենված Սուրենի մեջքին:

Նրա այդ հարցը բոլորի ծիծաղը շարժեց, գույեն նրա համար, վոր իրեն հարց տվալին ել ծիծաղացնեն:

Զարուհին արդեն հօդնել եր վոտի վրա կանգնեւուց, վոտները չեյին դիմանում նրա հաստ մարմնի ծանրությանը, բայց նա չեր նստում, կանգնած լավ եր տեսնում ու հետեւում ժողովին:

— Ընկերներ, հարցեր չկմն, — հարցրեց նա հոգնած լեղանակով:

Գլուխների արանքից յերեաց Ոհանի ձեռքը:

Վեր կենալով նստած տեսից՝ նա բլուզի փեշերն ուղղեց, մի անգամ ել աչքի անցկացրեց ձեռքը բռնած թուղթն ու սկսեց:

— Ընկերներ, սոցմբցման պայմանագիր ենք կընքել հարևան կոլլսողի հետ, — ու առանց ժամանակ կորցնելու սկսեց կարդալ պայմանագրի կետերը:

1. Բերքի հավաքը ժամանակին կատարել:
2. Ագնել չքավոր տնտեսություններին:
3. Կազմել հարգածային բրիգադներ...

Նա գեռ չեր վերջացրել իր ընթերցումը, յերք լսվեց խոմից: Բոլորը հետ նայեցին: Գրիգոր բիձան եր: ալեոր զլուխը թեքած կրծքին, նա քնել եր, և յերսի յերազի մեջ տեսնում եր, թե ինչպես գերանուին պինդ բռնած, մեջքը դեմ արտօն արեին՝ հնձիւմ ե արարտիկը:

— Զարթեցրու, ճայնեց նախազահը:

— Լավ թող քնի:

— Ե՛ շուտ արեք, ժողովը վերջացրեք — հորտու-

ջեց տեղից թախշին ու յերկու ձևոները զբանը դրամձ կծկվեց նստած տեղում:

— Դե լոեցիք, զոր վիքացնեմ խոսքս, — նեղացավ Ռանն ու շաբունակեց կարգալ:

Լելոնը ծխում եր ու մտածում: Նրա ուղեղում նոր ու նոր ծրագրեր եյին կազմվում, — «ինչպես անել, զոր կոլլեկտիվն ավելի ամրանա»: Նա տեսնում է զգում եր, զոր այն ներքին սղակը, զոր պետք և կապի ու ամրացնի կոլլեկտիվը՝ դեռ թույլ ե, և զորում եր պատճառները: Քննութիւն եր առնում առանձին առանձին մի անդամին, աշխատում եր պելի խորը թափանցել:

— Վոչ, — լարձը ձախով բացականչեց նա ու ցատկեց տեղից՝ ձեռքը պինդ խփելով սեղանին:

Գրիգոր բիձան վախեցած՝ աչքերը բաց արեց, տրամեց ու զարմացած նայեց շուրջը:

— Զե, իմ արտը, կոնհրս սազ ըլեն, վոսկորներին մեջ ուժ կա:

Կուլակներն այ սա կստանան, թող մի փորձ անեն մեղ խանգարել, կոլլեկտիվը պիտի նրանց ճզմի, — ողի մեջ բռունցքը ճոճեց կեռնի ու վոտը պինդ գետին խփեց:

— Ել հարցեր չկան, ժողովը վերջացավ, — հայտարարեց նախագահն ու ինքը առաջինը հրելով միւսներին՝ շարժվեց դեպի դուռը:

Գրասենյակը դատարկվեց: Լեռնը լամպը հանգցրեց ու Աննիկի հետ միասին դուրս յեկան փողոց: Լուսինը դեռ դուրս չեր յեկել. փողոցները խորդ ու բորդ: Լեռնը թեանցուկ արագ Աննիկին ու միասին տուն գնացին:

2

Աննիկը ներս մտավ սենյակ: Մեքենայորեն վառեց լամպն ու մի առժամանակ կանգնած մնաց սենյակի մեջ տեղը: Նրան թվում եր, զոր սենյակի պատերն իրեն ճնշում են: Զգիտեր ինչու հանկարծ տրամադրությունը վատացավ: Վերցրեց նոր ստացված թերթըն լնթերցելու, բայց միայն աչքերն ելին կարգում: Ուզում եր կենտրոնանալ, բայց մտքերը ցրված ելին: Վերջին ժամանակները հաճախ եր իր հետ նման տրամադրություն լինում: Լեռն ավելի ու ավելի յեր զերում նրա սիրուց: Եր վերաբերմունքը գեպի նա վերլուծում եր, հարց եր տալիս ինքն իրեն «Սիրում ես կեռնին»: Ներքուստ մի ձայն նրան պատասխանում եր «Ես, սիրում ես»:

Աննիկը վեր կացավ տեղից, մոտեցավ անկողնակալին ու թեք լնկուլ: Նա չեր նկատել, զոր տանտիբուհին իր համար սեղանին պատրաստել եր մի համեստ լնթրիք՝ հայ ու պանիր:

Նրա մեջ ցանկություն առաջացավ գնալ հարեվան սենյակից կանչել կեվոնին, նստել նրա հետ պատշզամբում ու յերկար յերկար խոսել: Զե՞ զոր լուսնյակն արդին դուրս եր յեկել ու մեղմ ժպտում եր իրեն սենյակի լուսամուտից:

Նա մոտեցավ դուռնը, բայց նորից հետ յեկավ:

Մեղմ թախիծը պատեց նրա սիրուը, նորից մոտեցավ անկողնակալին, հանեց վրայից քաթանի գերան, լամպը հանգցրեց ու պառկեց քնելու: Բայց յերկար ժամանակ նրա քունը չեր տանում: Միտքն ամբողջ ժամանակ պատըտվում եր կեվոնի շուրջը, և արդ

մաքի մեջ ընկդմված նա վերհիշեց իր առաջին հաճ-  
դիպումը նըս հետ:

Հուլիս ամսվա սկզբներին եր, ցերեկվա ժամը  
1—ը կիներ: Արգա ամենաշոր ժամանակը: Զիակառքը  
զուղից մի վերսու հեռավորության վրա կանգ առավ:   
Աննիկը ցած իջավ կառքից, ձեռքը բատծ պատուակը:  
Ետ կանգնեց, նախց, թե ինչպես կառքն առաջ սլա-  
ցավ, հետո թեքվելով դեպի տջ՝ միքանի վարդկանից  
նրա տչքից չքացավ:

Հեռվից արգեն լերեվում ելին գյուղի տների  
կղմինը կտուրները:

Մի քանի որ իրար ցետեվից տեղացող անձրեվից  
տանող լերկարածիդ ճանապարհը ծածկվել եր ցեխով:  
Մի քայլ անում եր նաև ցեխի փափուկ կտորները կըպ-  
չում ելին նրա կոշիկներին ու ել պոկ չելին գալիս:  
Ցեխից վատները ծանրանում ելին ու հազիվ եր նա  
կարուանում քայլել:

Ամպերը ձեղքելով՝ արեվը դուրս եր յեկել ու  
ալլում եր նրան: Բայց նա մինչև ծնկները հասնող  
ցեխը կոխուանվ գնում եր: Մի քանի քայլ հեռավոր-  
ության վրա, մի փոքրիկ տղա բակից սակերին դուրս  
եր քում: Աննիկի դեմքը զվարթացավ, վորոշեց զիմել  
կըպն ու խնդրեց վոր ողնի իրեն իրերը տանելու մին-  
չև զուղլսորհուրդը: Տղան պատասխանից «Փնամ մարս  
հարցնեմ»: Քիչ հետո վերադարձավ և հրաժարվեց.  
մարը թուզ չեր տվել: Աննիկը հուզմունքից շուրթերը  
պինդ սեղմեց ու սորից պալուսակը ձեռքին առաջ  
քայլեց: Մի քիչ անց, ճանապարհին հանդիպեց մի մեծ  
քարի: Խոկուն բեռը դրից ցած, վատները մաքրեց ցե-  
խից ու ինքն ել նստեց հանգստանալու: Այդ միջոցին,

նրան գեմ-զիմաց, գյուղի կողմից գալիս ելին յերեք  
գյուղացիներ, գերանողիներն ուսերին դլած:

Աննիկն անմիջապես զիմեց նրանց.

— Վրտեղ կ գյուղխորհուրդը:

Նրանցից մեկը կանգ առավ, վոտից—գյուղի չա-  
փեց Աննիկին, ապա հետ զանալով՝ ձեռով ցուց տվեց:

— Այ քուրիկ զնա, եսպես, մոտիկ ա:

Նա հանգստացավ գյուղացու այդ պատասխանից,  
ու վեր կենալով՝ նույն ուղղությամբ շարունակեց իր  
հանապարհը:

Նա արգեն հանգիպում եր գյուղի քարե մի հարկանի  
շենքերին, վորոնք շինված ելին ուղղաձիգ կերպով  
ճանապարհի լերկու կողմը: Բայց նա ուշագրություն-  
չեր դարձնում և ժամանակ ել չուներ հետաքրքրվելու  
գյուղի արտաքին ահսքով: շտապում եր շուտ աղա-  
վել ձեռի բնոից, չափազանց հոգնել եր:

Կանաչը նկատելով նորեկին հետաքրքրությամբ  
նայում, զննում ելին նրան: Ահա մի աղջիկ, ծաղկավոր  
չիթ դեբրան հագին, վառները բորիկ, կուժն ուսին  
գրած, մոտեցավ ու հարցրեց:

— Եղ մեմ տունն ես հարցնում:

— Ռւզում հմ գյուղխորհուրդ զնալ, հեռան յետ

— Զե, զնանք, իս ել եղ կողմի հմ գալիս,—այս  
ասելով նա ձեռքը մեկնեց ու Աննիկի ձեռքի պատւ-  
ակը վերցրեց: Բեղարած կինես, վերելից ես գալիս:

— Յես զյուղի դպրոցի ուսուչունին եմ:

Միքանի քայլի վրա աղջիկը պայտասակը հանձ-  
նեց Աննիկին ու մատով ցուց տալով գյուղխորհորդի  
շենքը՝ ինքը զնաց դեպի այրուուրը:

Աննիկը զբանինակ մտնելուն պիս ձեռքի իրերը  
գրեց նստարանի վրա ու ինքն ել նստեց:

Արեից, հոգնածությունից նաև կարմրել քրտնել եր, իսկույն գլխից հանեց զլիսարկն ու մազերն ուղղեց, Նրան մոտեցավ մեկը՝ առաջ կազմվածքով, հաղթանամ, յերկարածիտ կոշիկները հապին ու հարցրեց.—

— Ընկեր, ում եք ուղում:

— Գլուղխորհրդի նախագահին, յեկել եմ զպրոցում աշխատելու, — պատասխանեց Աննիկն ու հայեց ուղիղ նրան:

Անձանթը ձեռքը սեկնեց, ծանոթացավ նրա հետ ու հայտնեց, վոր ինքը կոլանտեսության նախագահն ե:

Աննիկի զեմքը մի քիչ զվարթացավ:

Լեվոնն անմիջապես իր մոտ կանգնած տղաներից մեկին ուղարկեց զյուղխորհրդի նախագահի հետեւց, իսկ ինքը տեղափորվեց նստարանի վրա, նրա կողքին:

Աննիկը սկզբից կողման եր խոսում նրա հետ, չեր ել նաևուած նրան: Նրա ուշագրությունը զրավում ելին գյուղացիները, վորոնք կենտ—կենտ դալիս, նայում ելին նրան ու հետ գնում, իրար ասում—«Թագավարժուհի յե յեկել մեր զյուղ»:

Ի՞նչպես ե գնում կուսակցական աշխատանքը, կոլխոզը լավ ե աշխատում, — հարցրեց Աննիկը՝ նայելով Լեվոնին:

— Աշխատում ենք հետ չմնալ, ծիծաղեց նա ու ինքն իրեն—լավ ե, միասին կաշխատենք, մի նոր աշխատող յեկավ մեր զյուղը:

Նա առաջարկեց Աննիկին կոլանտեսության աշխատանքներին ծանոթանալ մինչեւ զյուղխորհրդի նախագահի դալը:

Աննիկը հսմածալնից:

— Իսկ զպրոցի շենք ունեք:

— Այս այս տարի յենք նորը շինել գնանք, կտեսնենք, — ասեց Լեվոնը նրան ու առաջնորդեց դեպի կուտանտեսության զրասենյակը:

Նրանք անցնում ելին աղբյուրի մասով: Աղբյուրի մոտ հավաքվել ելին մի խումք ջահել հարս—աղջիկներ: Նրանց մեջ Աննիկը տեսավ իրեն առաջին ծանոթ աղջկան ու ժպատց: Նա ձեռով ինչ վոր պատմում եր, և յերբ հեռվից նկատեց Աննիկին՝ ցուց տվեց—«Այ, սա յի»: Բոլորը նայեցին Աննիկին: Նա լսեց ու ինքն ել չգիտեր ինչու՝ մինչեւ ականջները կարմբատակեց: Նա հիշեց, վոր կարմբեց նայել այն ժամանակի, յերբ առաջին անգամ զգաց: Վոր ինքը սիրում է Լեվոնին:

3

Նազիկը, չնայած իր ջահել հասակին, ժպմանակից շուտ եր ծերացել, սպիտակ ճակատը կնճիռներով ծածկվել: Մազելը սանրելիս, հատ-հատ սպիտակ մազերի հանդիպելին՝ նա ինամքով պոկում եր, դրանով նա կարծես ուղում եր վրա հասնող ծերությունը կատեցնել:

Նրան ամուսնացրել ելին 14 տարեկան հասակում: Դեռ շատ փոքր եր յեղել, յերբ ծնողները մահացել ելին: Ապրել և մհծացել եր բարեկամների խնամքի տակ:

Հինգ յերեխա յեր ունեցեցիլ վորոնցից միայն մեկը կենացնի յեր մնացել: Դրա համար ել այդ մեկին աչքի լույսի պես սիրում եր:

Յերեխային քնեցնելուց հետո, նա գեռ յերկար ժամանակ հստած նրա մահճակալի կողքին՝ լսում եր նրա շնչառությունը:

Ժամանակն անցնում եր, թեյը վազուց սառել եր

սեղանի վրայ Աչքերը փակվում ելին, զլուխը կուցավ լերեխալի վոտների վրա և ննջեց:

Հանկարծ նա վեր թռավ տեղից, կարծես մեկը նրա վզակոթին տվեց: Իր սպիտակ, փափուկ ձեռքերով աչքերը տրոբեց, նայեց չորս կողմք. ամուսինը դեռ չեր յեկել: Նա անհանգիստ քայլերով գուրս յեկավ պատշաճմբ, նայեց հարեան սենյակին, լուցկին վառեց ու լուսամուտից ներս նայեց: Մութ եր սենյակում և վոչ վոք չկար: «Ուրեմն նա յել գեռ չի յեկել», — մտածեց նա ու տարակուսած ներս մտավ սենյակ: Նա գիտեր, վոր Աննիկը ժողովի յե գնացել, գեռ չի յեկել, նշանակում ե՞ ժողովը չի վերջացել:

Մի տարուց ավելի յե Աննիկը հարեան ե. լավ գիտեր նրա վերաբերմունքը գեպի իրենց ընտանիքը, մանավանդ գեպի լեռնը — ընկերական վերաբերմունք ունի: Ուրիշ բան, նա յերբեք չեր կասկածել բայց այսոր չգիտեր ինչու անհանգիստ եր և ինչ վոր կառկած կրծում եր սիրտը:

Նա մոտեցավ, լուսամուտից գուրս նայեց. փողոցում մութ եր, վոչինչ չեր կարելի նշմարել: Յերկար ժամանակ ճակատը գեմ արած լուսամուտի ապակուն՝ նայում եր, ու քանի գնում կասկածը նրա մեջ շատանում եր. — «Իսկ յեթի լեռնին մի փորձանք պատհած լինի» — առցավ նրա մտքով: Նա վախեցած այդ մտքից, կայծակի տրագությամբ վեր ցատկեց տեղից, մտեցավ մահճակալին, նայեց բարձի տակ ինքն ել շիմանալով ինչու, նորից հետ գնաց:

Այդ միջոցին յերեխան քնի մեջ անհանգիստ մի շարժում արավ ու վոտներով վերմակը գեն շպրտեց: Մալրը խնամքով վերմակը ծածկեց յերեխալի վրա,

շփեց նրա ճակատը, մազերը: Նա հանգստացավ, վոր յերեխային վոչինչ չկա, լամպի պատրույզը ցածրացրեց, վոր լույսը չխանգարի փոքրիկ Սերյոժին, իսկ ինքը հանգեց ու պառկեց քնելու. բայց հաղիկ եր աշքը կպցրել, յերբ լեռնը տուն յեկավ:

Նազիկն ուրախացած աչքերը բաց արեց, մոռացութիւն տալով բոլոր կասկածները՝ սիրալիր հայացքով նայեց ամուսնուն: Բայց լեռնը անխոս մոտեցավ սեղանին ու նստեց ընթրելու: Նա դեռ ժողովի թարմ տպավորության տակ եր, մտածում եր նույն հարցի մասին, վոր հղացել եր նրա մեջ գեռ ժողովում: Միյերկու պատառ հաց գրեց բերանը, ծխախոտը կպցրեց ու գուրս յեկավ պատշգամբ:

Լուսինը նոր եր գուրս յեկել սարի յետեկից: Լեվոնը կանգնած նայում եր հեռուն, և նրան թվում եր, վոր ահա ինքը տեսնում է սարի լանջին փոված, կողմեկանիվ վարթամ արտերը, վոսկեգույն հասկերը վողջունում են իրեն, Ա՛խ, ինչպիս նա կցանկանար այնտեղ լինել, զրկել այդ հասկերը: «Ինչու յեմ լես հիմտմենակ, ինչու նրա հետ չեմ, վորն ավելի լավ և հասկանում ինձ, վորի հետ կարող եմ իմ ապրումներն ու մտքերը բաժանել»: Նա մի ծանր հոգոց հանեց. «Չե վոր սա չի հասկանում ինձ», — մտածեց նա, լեռը ներսից լսվեց կնոջ ձայնը: Նազիկը կանչում եր նրան, վոր գա, քնի, հանգստանա: Ամուսինն անուշադրության մատնեց կնոջ հրավերը: Նա ուզում եր մենակ լինել եր մտքերի հետ. այդ վալրկանին կնոջ ձայնը շատ անախորժ եր իրեն:

Նազիկն ալլես չկարողանալով տանել ամուսնու լուսիւնը, վոտարորիկ վազեց գեպի գուռը և հչաց. —

— Աւոն, ի՞նչ ե պատահել, ինչու չես քնում:  
Բայց յիբ հանդիպեց նրա սառն հալացքին, հուսա-  
խաբված հետ գնաց ու նորից պատկեց անկողին, ի-  
րեալ դեմ արագ պատին ու կրկին աշքերը փակեց:

— Ի՞նչ անի, — մտածում եր Լևոնը... Մեղավոր  
ե նա, վոր չի հասկանում ինձ»: Նրան թվում եր, վոր  
արդեն իր և նալիկի միջե մի խոր անգունդ եր բաց-  
վել, ինքն առաջ ե գնում, տեսնում ե հեռուն, իսկ  
նա հետ և կանչում իրեն... Չե, չե նա հետ գնալ չի  
կարող: Ինչու ին այլպիս փորփում իր սիրաը, այլիս  
վոչինչ չկա աճնաեզ, բացի այն, վոր նա իր յերեխա-  
յի մայրն և Բայց ինչպես ե նա քանդելու այդ հան-  
գուցը: Նրա ուղեղը ծանրացել եր այդ մտքերից:

Լևոնն իր հորը բոլորովին չեր տեսել, նրա մա-  
հից մի ամիս հետո յիր ծնվել Նրա մալը ջահել, զե-  
ղցիկ, յերկու յերեխայով մնում ե փորքեփալրի: Շու-  
տով նա ամուսնում ե Լևոնին թողնելով հորեղբոր  
խնամքի տակ: Այսպիսով նա մանկությունից զբարիում  
և ծնողական գգվանքից: Ութ տարեկան հասակում  
Լևոնը դառնում ե աշխատաղ ձեռք հորեղբոր տնառե-  
սության մեջ: Նա գանձիր ե արածացնում, կիսաքաղց  
փորով, մերկ, գոտաբրորիկ: Հիշում ե մի դեպք, յերը  
գիշերը, չկարողանալով քունը հաղթել, պատկել կա-  
նաչ խստերի վրա ու քնել եր: Անձրեց վերեկց կաթ-  
կթում եր. հարեանը տեսնում ե նրան այդ զբության  
մեջ, գրկում նրան, տեղափոխում սայլի վրա և վրան  
ել փարասով ծածկում: Նա ութիննը տարեկան ե լի-  
նում, յերբ իրենց գլուղում բացվում է զպըցուց իրեն  
հանակակից յերեխաները զնում են զպըցուց: Յերբ հան-  
գիպում ե ընկերներին, վորոնք զնում են զպերը

ձեռքերին, ինքն ել և ուզում գնալ, նրա մանկական  
սիրտը լցում ե հախանձով: Յեվ մի որ, հորեղբորից  
թագուն, փախչում ե, գնում զպըցուց: Յերբ այդ լուրը  
հորեղբոր ականջն ե ընկնում, նա Լևոնին մի լավ  
ծեծում ե ու խստիվ արգելում զպըցուց գնալը — «Յես  
քեզ պարտավոր չեմ ձրի հաց ուտեցնել մեկ ել իմա-  
ցել եմ, վոր տափարը թողել ուսումնարան ես գնա-  
ցել՝ սաղ տեղով ականջը կթողնահմ»:

Լևոնը սիրտը լցված գնում, պատկում ե կանաչ  
խոտերի վրա, հեկեկում յեվ արցունքն աչքերին քնում:  
Յերբ աչքերը բաց ե անում, անոնում ե՝ մալրն իր  
գլուխը գրկած, ծնկներին դրած՝ շուկուժ և նա լացը  
խեղղելով՝ աղաչում ե մորը, վոր իրեն հետը տանի,  
վոր ել չի կարող հորեղբոր տանը մնալ, ծեծում են:  
Ցուց ե տալիս իր բորիկ գոտները՝ վորոնց վրա մի  
տողջ տեղ չկա, քարերից ջարդվել վերքերով են  
ծածկվել...

Մոր սիրտը մղկանում ե: Նա համբուրում ե վոր-  
դուն, ուզում ե սիրած զավակի կարուն առներ: Ի՞նչ  
անի, կարիքն ե ատիպել նրան...

Լևոնը պատմում ե, վոր քնի կարսու ե, գիշեր-  
ները մնում ե հանդի: Յերբ պատկում ե քնելու՝ գոմեշ-  
ների պողերից կապում ե թողի մի ծալը, միյուս ծալ-  
ըն իր թերվից: յերբ գոտիշները շալժվում են՝ վախե-  
ցած վեր և թշուս, կարծելով, վոր նրանք վախել են:

Յերկու որից հետո մայրը զնում ե յեվ ուզում և  
Լևոնին ել հետը ատնել, բայց հորեղբորայրը թուլ չի  
տալիս. չե վոր զպիկում ե նրա նման աշխատագից:  
Բայց մի ամիս անց Լևոնը հաստատ վորոշում ե փափ-  
չել գնալ մոր մնալ Մարտինը և հորեղբորից



ծածուկ իրենց գյուղից մինչև Համամլու գնում և վստով։ Միտարի ապրում և այնտեղ՝ Մայրը նրան դպրոց եռուղարկում։ Հետեւյալ տարին խորթ հայրը նրան տանից դուրս և անում։ Դարձյալ Լեվոնը մնում է անողնական, թափառական։ Հորեղբոր մոտ վերադառնալ չի ուղում. նրա սիրաց զառնացած ենրանից, ի՞նչ անի, մտածում է նա։ Բայց ահա բաղդը նրան ժպտում է, — այդպես և թվում Լեվոնին։ Մի կոշկակար նրան վերցնում է իր մոտ, վորպես աշակերտ։ Հինգ տարի աշխատում է կոշկակարի մոտ՝ մի փոր հացի համար։ Առավոտից մինչև կես գիշեր նրան աշխատեցնել են տալիս, տավարին և արածեցնում, և գոմը ավլում, ինչ գործ լինում է՝ Լեվոնին են հանձնում։ Յերբ գիշերը քնում ենցավից նրա վոտները տնքում են։

Մի որ Լեվոնը յեղները տարել եր արածեցնելու, յեղներից մեկն անցնում և Խանաղան կալվածատիրոջ հողամասը։ Դաշտապետը յերբ տեսնում է այդ՝ իսկուն հրացանով սպանում և յեղին։ Լեվոնը մնում է շվարած, գլխին և տալիս, ծնկներին—ի՞նչ պատասխան, տա տիրոջը։ Միրտ չի անում տուն վերադառնալ տավարը քշում և դեպի գլուղ խոկ ենքը թողնում, փախչում եւ։

17 տարեկան հասակում նա դառնում է սեվագործ բանվոր Քոլագերանից Ստեփանավան տանող խճուղու վրա։ Մի տարի աշխատում է, ընտելանում և այդ կյանքին։ Բայց մի որ, տասնապետի հետ կովի լեռնվում, վորը խփել եր բանվորներից մեկին։ Լեվոնին գործից հեռացնում են։ Մի շաբաթ անգործ, սոված թափառում է, վերջը ճարահատակ վերադառնում է գյուղ։

Այդ ժամանակ եր, վոր առաջին անգամ սիրա-

հարվում է, նրա գեղեցիկ արտաքինը, առնական գեմքը, շագանակագույն աչքերը, գանգուր, սև ու խիս, մազերը, բարձր հասակը, լերեսին աղվամազը գեռ նոր բուսած՝ գրավում են գլուղի ջահել ու դեռահաս աղջիկներին։

Առաջին սերը վողբերգական է լինում։ Միրում են միմյանց Լեվոնն ու Արուսյակը, բայց աղջկա հայրը մերժում է, վորովհետեւ Լեվոնը չքավոր և լինում։ Աղջիկը հրվանդանում է ու վաղաժամ մեռնում։

Լեվոնի սիրաց խոցված, վշտոտ, որ ու գիշեր մտածում է—ինչու՞ այդպես պատահեց։ Գեղեցիկ Արուսյակի պատկերը նրան հետապնդում է և նրա մեջ խոր տաելություն առաջացնում գեպի այն հարուստ—վաշխառու մարդը, վոր իր անբաղդության պատճառ եր գտոնել։

Ժամանակի ընթացքում նրա վերքը բուժվեց։ Նա նայում եր իր ամրակուռ բազուկներին ու մտածում—«Միթե չպիտի կարողանամ նրանից վրեժ լուծել»։

Ցեղ մի որ, յերբ պատահմամբ անցնում եր հոր յեղբոր տան մոտով, նրա ականջին հասնում են դնոլ—զուռնայի ու նվազի ձայներ։ Նա հետաքրքրված մըտնում է ներս և ի՞նչ տեսնում։ Իր հորեղբարն ու վաշխառու Ալեքը աչքալուսի կենաց են խմում։ Լեվոնի արյունը գլխովն և տալիս, հազիվ կարողանում է իրեն զապել։ Նա հեգնորեն զիմում է նրանց։ —

Ես ի՞նչ աչքի լույսի կենաց եք խմում։

Հորեղբարը նրան մի թաս գինի լի առաջարկում և արյունակալած աչքերով, գինուց կարմրած ալտերով՝ ասում եւ—

— Ակոն ջան, Ալեքը հետ ինսամի լենք դառել,  
Սանդրոյիս նշանդըհքն ե:

Առնը բաժակով լի գինին զեն և շպրտում ու  
դուռը շրխկացնելով՝ դուրս վազում փողոց:

— Փուչ զալակ ե լեզել հա... գինթինթում ե Ալեքը:

— Վոչինչ, ինսամի Ալեք, ջահելություն ե ա-  
նում, սիրալ լցված ե, — հանգստացնում ե նրան Մար-  
կոսը, Առնի հորեղբարբ:

Առնը զալրացած դուրս ե զալիս. «Ուրիմն հոր-  
յեղբարը ու Ալեքը ինսամի լեն դառել... եղան ել պետք  
լինի, նրանց յերկուսի ջուրը մի առվով ե գնում»,  
խորհրդակցում ե նա ինքն իր հետ:

Հետեւալ տարին նրան տանում են զինվոր ու  
քշում պատերազմի դաշտ: Սկզբում նրան թվում ե,  
վոր արդակս ել պետք ե լինի, վոր ամեն ինչ գնում ե  
ո բնական որենքով: Նա կռվում ե, լինում ե առաջա-  
վոր զերքերում, բայց նրա վողեվորությունը տեղի լե-  
տալիս հուսախաբության: Խրամատնելում նստած՝ նա  
հաճախ մտածում ե, թե ինչու մարզիկ իրար կոտո-  
րում են, վորոնում ե պատճաները, ինքն իրեն մտա-  
տանջում ե՝ ալյ հարցերի պատասխանը դանելու հա-  
մար:

Շուտով նրան տեղափոխում են մեկ ուրիշ գունդ  
Այստեղ նա ընկնում է հեղափոխականորեն արամազրված  
զինվորների շրջանը: Հաճախակի զբուցը նրանց հետ-  
քաց ե անում կերպում աչքերը. նա սկսում է հասկանալ,  
իմանար նրա գիտակցությունը դասակարգայնորեն  
ավելի լե ընբուտանում: Մի քանի ժամանակից հետո,  
ինքն ել ե մտնում զինվորական մասիրում աշխատող  
գաղտնի բալշեվիլյան կազմակերպության մեջ: Շուտով

նա հիվանդանում է բծավար տիֆով: Նրան տեղափո-  
խում են զինվորական հիվանդանոցը: Յերկու ամիս  
մնում է հիվանդանոցում: Առողջանալուց հետո նորից  
ձակատ են քշում, և վերագառնում է միայն հոկտեմբեր-  
յան հեղափոխությունից հետո:

#### 4

Գունդը մտել եր դյուդ: Առնը գնդի հետ եր, նա  
վաշտապետ եր:

Հրամանատարությունը ժամանակավորապես տե-  
ղակորպել եր գլուզական մի խրճիթում:

Առնը զինվորական զգեստով, գլուխը կռացըրած  
սեղանի վրա, ճրագի լուսի տակ ինչ վոր բան եր գը-  
րում: Նրա գեմքը մտահոգված եր, հոգնածությունից  
ու անքնությունից աչքերը փակվում ելին, բայց նա  
քնած չեր, արթուն եր և աշխատում եր:

Խրճիթում կեղառու եր ու սառը: Դիմացի բաց  
դունից լսվում եր քնած մարզու խոմփոց: Դուռը դրա  
կողմից բացվում ե, մի կարմիր բանակային ներս և  
մտնում ե տառը: —

— Բնկեր վաշտապետ, մի բանտարկել են բերել:

Առնը թեքվում է նստած տեղը և կարգադրում  
բանտարկելին անմիջապես բերել ներս: Զանցած հինգ  
րոպե՝ ներս են բերում բանտարկյալին: Առնը գլուխն  
առաջ ե բերում, չի հավատում իր աչքերին: Նա լամպը  
մոտեցնում է բանտարկյալի զեմքին՝ նրան ավելի լավ  
ձանաչնուռ համար, և անմիջապես ճրագը ձեռքից ցած  
ե զնում սեղանին: Մի առժամանակ լուս նայում է  
դիմացը կանգնած մարդուն:

— Ազգակա ուրեմն, դու կովում ես բայլշեփեների պէմ, — հարցնում ե հեղնանքով Լեռնը և նալում ուղիղ նրա աչքերին:

Բանտարկյալը մի քայլ առաջ յեկավ դեպի Լեռնը:

— Իսկ դու, դու մոռացել ես ինձ:

— Վոչ, յես քեզ չեմ մոռացել և ճանաչում եմ ու գիտեմ, զոր դու իմ հորեղբայրն ես, սատնամբառությամբ պատասխանեց Լեռնը:

— Միթե դու այնքան անգութ ես, զոր չես իբ նայի իմ ծերացած հասակը, չե՞ զոր դու ել մեր արյունից ես, — աչքը զցելով նստարանին՝ ասեց հորեղբայրը:

Տարիների ընթացքում նա բավականին փոխվել եր, Արեից կոշտացած լերեսը կնճոտվել եր ու բրդութելու Մազերը սպիտակել ելին: Նա իր վոսկրացած ձեռների մեջ պիտի սեղմել եր փափախը և անընդհատ աչքերը խաղացնում եր Լեռնի վրա:

Լեռնը կարգադրեց Կարմիր բանտակալինին հեռանալ:

— Այս, դու իմ հորեղբայրն ես, — կրկնեց նա ինքը իրեն ու զեմքը մռայլեց ու մի պահ զլուխը կախեց:

Միայն սեղանի վրա ճրագը ճանաւում եր ու ընդհատում խրձիթում մի քանի վայրկյան տիրող լուսությունը. Լեռնը կրկին վերցրեց զբիչը և սկսեց թղթի վրա ինչ զոր զրել, կարծես մոռացել եր, զոր իր դիմաց կանգնած ե հորեղբայրը և սպասում ե իրենից վճռի. «Այս, յես եմ տալու քո դատավճիրը» ամբողջ ժամանակ պատվում եր այդ միտքը նրա ուղեղում. և մի լուսե նրան թվաց, թե ահա հորեղբայրը կծկվեց,

աննկատելի դարձավ, փոքրացավ իր աչքում. Նա ձեռով ճակատը շփեց ու ասեց. —

— Յես քեզ իմ ճանաչում, իերը դու քո կօրացած մեջքով, զոսկրացած ճեռներով յերկաթուղու զիծն ես քանդում, զոր խորտակես զնացքը. միթե այն ժամանակ չեյիր հիշում քո ծերացած հասակը...

Հորեղբոր գեմքը սփրիֆնեց, գուցնը թռավ նրա յերեսից, զեմքի մկանները կծկվեցին. շրթունքները դողովացին. —

Դիտեմ, իրավունքը քո ձեռին ե...

— Հեղափոխական որենքը շատ դաժան և իր թրշնամիների հանդեպ, — ասեց Լեռնը, վճռողական ու խըրսություն յեղանակով և իր ամբողջ հասակով կանգնեց նրա դիմաց:

Հորեղբայրն ուշադրությամբ չափեց նրան վոտից գլուխ:

— Լեռն, դո չես տեսնում իմ սպիտակ մազերը:

Լեռնի ճակատը կնճավեց ու նա ընկլմվեց մըտքերի մեջ: Այս իր հարազատ հորեղբայրը ե, իր արյունիցն ե, բայց միթե ինքը կարող ե թռուցնել իր վճիռը նրա հանդեպ, չե՞ զոր նա կովում ե պրոլետարիան դիկտատուրայի զեմ:

— Լեռն, յես քեզ մեծացրել եմ, դու յեղել ես իմ հարազատ զավակը, — լավեց նրա ականջին հորեղբոր թույլ ձանը:

— Մեր ճանապարհները տարբեր են, յես պաշտպանում եմ պրոլետարական դիկտատուրան, կովում եմ շահագործության զեմ, իսկ դու պաշտպանում ես շահագործումը և հին կարգերը: Մեր մեջ զոչ մի ընդհանուր բան չկա, բայցի այն, զոր յես քո յեղբոր տղան եմ, — վերջացրեց իր խոսքը Լեռնը:

— Հիշիր, Ասոն, վոր Սահնդըսն կենդանի յե մոռւմ,  
քո վոտների տակ կոխոտած մեր արլան համար, նրա  
հետ գեմ առ գեմ պիտի կանգնեսու, — ասեց հորեղբարը:

Նրա կարգապըռությամբ զիշերը հորեղբորը փակել  
ելին, Հետեալ որը նրան դատեցին հեղափոխական  
դատարանով:

Այդ խոսքերը շատ խորը տպագործել ելին Ասոնի  
ուղեղում և ալսոր չզիտեր ինչու գարձյալ հիշեց հորեղ-  
բոր վերջին խոսքերը: Յեվ մի բարե նրան թվաց, վոր  
տհա իր դիմաց կանգնած և Սահնդըսն՝ զիվալին քըր-  
քիջը շուրթերին: «ուզում ես ինձ վոչնչացնել, արմատը  
շատ խորն ե, ուժը չի պատի ալզ արմատը պոկելու»  
— նորից քըրջում և բարձր ձայնով: «Այս, կպոկենք  
այդ արմատը, վորքան ել խորը լինի, չե՞ վոր այդ ուժը  
կոլլեկտիվի ույժն ե, չե՞ վոր սոցիալիզմ ենք կուռու-  
ցում», բարձրածայն մտածեց Ասոնը:

Ամուսնու ձայնից նազիկը քնաթաթաթախ վեր թուով  
տեղից ու նորից զիշերալին շապկով, մերկ վոտներով  
վազեց դեպի պատշաճը:

Կոտջ տեսքը կարծես սթափեցրեց Ասոնին իր մըռ-  
քերից: Նա ճակատը շփեց ու յերկար, յերկար նրան  
նայեց: «Եսկ սա ինչպէ և մեղավոր, վոր չի հասկա-  
նում, բայց տանջվում ե ինձ համար».

— Գնա, գնա քնիր, — ասեց նա մեղմ լիդանակով  
ու ինքն ել մտավ սենյակ:

5

Կոլտնտեսության արտերը փոլիել են սարի լան-  
ջին: Ցորենի հասած հասկերը մեղմ զեփլուոփ ներքո  
ալիքավորվում են ու կարծես վողջունում կոլտնտեսա-

կաններին: Կիզիչ արկի ճառագայթների տակ պսպղում  
են դերանդիների սուր բերանները:

Կոլտնտեսությունն աշխատանքի լի զուրս լիկել:  
Հնձվորների բրիգադները ուղղաձիգ կալոնանե-  
րով շարվել հասա բազուկներով զերանդիները շոր-  
ժում, հնձում են հասած արտերը: Քրտինքը ծորում և  
ամեն մի հնձվորի ճակատից: Բարձրանում են դեգերն  
իրար կողքի:

Ծլել ե արտու,  
Ծփում ե արտու,  
Կորել ե գարդու, ջան...

Արտի մլուս ծայրից լսվում է Ասոնիկի յերգի գու-  
րեկան ձայնը, և նրա լերգին ձայնակցում են բրիգա-  
դիրները:

Կոլեկտիվի արտերում,  
Արորը մերն ե,  
Մաճկալը մերն ե, ջան...

Ասոնիկը կոլորնտեսականների հետ աշխատանքի  
և զուրս լիկել: Յեղանը ձեռքին նա մըռուների հետ  
թափուկ և շինում: Հազին ունի բարակ շիթ զելը, բաց  
թերով, զվիխն կապած կարմիր թաշկինակ, վորի տա-  
կից նրա ճակատին են փոլիել մազերի խոպոպիկները:  
Արկից ալրված նրա գեմքն ավելի դուրեկան ե: Մեզմ  
ժպիտը խաղում ե նրա գեմքին:

— Ընկերներ, հարվածային աշխատենք, — կան-  
չում և Ասոնն ու զերանդին քաշում, քաղում և հաս-  
կերը:

— Ահա թե վոնց ենք կուլակի գերեզմանը փո-  
րում, — լսվում ե Տեմկոլի ձայնը, վորը նստած հնձող

մեքենալի վրա, նրա լերկաթե ատամներով հնձում է հասկերը, խուրձերը դարսում իրար յետելից:

— Եղիկի, կուժը վերցրու, գնա աղբյուրից սառը ջուր բեր, — ձայնեց Սուրենն ու թևով լերեսի քրտինքը սրբեց:

Քանի գնում՝ շոգն ավելի լեր զոռում. մերթ մեկը, մերթ միուսը հանում եր վերեկի շապիկը:

Աննիկը, վոր սովոր չեր նման ֆիզիքական աշխատանքի, շատ շուտ հոգնեց ու մի քանի վայրկան կանգնեց հանգստանալու, թենքը հենվելով լեղանի կոթին: Նրան մոտեցավ Լեռնը, քրտանած դեմքով, գլխարկի տակից նրա ճակատին փովել եր մազերի փունջը:

— Աննիկ, հոգնեցիր, տեսնում ես, ինս բոլորովին չեմ հոգնում:

Նա վոչինչ չպատասխանեց, միայն ժպտաց նբան: Մարիամը դարձալ դունչը ցցած հետևում եր նրանց, վերջը մոտեցավ, բայց նույն բոպելին Տեմկոն ձայն տվեց, վոր մեքանան կանգնել եւ Լեռնը շտապեց, նրան հետեցին մի քանիւր:

Փոքրիկ փայտենստարանի վրա նստած՝ Գրիգոր բիծան սրում եր իր գերանդին: Նրան դուր չեկավ, վոր կոլտնտեսականները հավաքվեցին մեքենալի մոտ. նա քթի տակ մրթմրթաց: —

— Ե, ի՞նչ ե, եկ մաշինը մեր գործը խափանում ե, սազ ըլի գերանդիս:

— Բիծա, մեքենալով ավելի աբազ ե մեր գործը առաջ գնում, ել ստիպված չես լինի մեջքդ կոսցնել արեի տակ. — վրա բիշեց Աննիկը:

— Հասկանում եմ, հասկանում եմ, ես գերանագիրս հետ իս բոլ եմ քաշել, մազերս սպիտակել ե,

ասաց Գրիգոր բիծան հոնքերը կիտելով, ու նորից մեջ քը կուացրեց:

Որն արդեն ճաշին մոտ եր աշխատավորները սովածություն ելին զգում, բայց նըանց ճաշը դեռ պատրաստ չեր:

Մի քանի քայլ հեռավորության վրա լեր Սանդովի արտը: Նա յերբ տեսավլ մեքենան կանգ առավ թողեց իր աշխատանքը և լուցկու պատրվակով մոտեցավ Գրիգոր բիծին:

— Հը, Գրիգոր, ես ի՞նչ ե, եսոր կոլեկտիվը դանդաղ ե աշխատում, — հեղնանքով հաբցրեց նա:

Գրիգոր բիծեն դժգոհությամբ դեմքը ծամածուց և ուսերը վեր քաշեց:

— Յես ի՞նչ զիտեմ:

— Եսպես վոր շաբժվեք, ձեր ցորենը կչորանա, տալվարի բաժին կղառնա, ել լիբը եք հնձելու. — չարախնդությամբ հարցրեց Սանդոն: Մեկ ել նա աշքի տակով նայեց, տեսավլ մեքենան սկսեց աշխատել: Քթածակերն ուղցրեց ու ծխախոտը փաթաթելով՝ ասեց:

— Մի կըակդ տուր... Դե կոլեկտիվը լավ բան ե, թե համերաշխ աշխատեն, բայց խելքս բան չի կարում, մեզ ել վոր ձայն չկա խոսելու...

Այս ասելով նա հեռացավ. Սուրենը ծուռ-ծուռ նայեց նըա հետեւից:

— Տեսնում ես, լեկել ե ի՞նչ աղվեսի լեզու յերանիցնում, զիտեմ քո փորացալիք հմ...

— Բա զե ճիշտ ե ասում Սանդոն, գործը թաղել եք, մաշինց պոկ չեք գալիս, հեղացավ Գրիգորը:

Զինի Սանդոն քեզ խելքահան ե արել ճիշտն ասա, բիծա, հը, հանաքով հաբցրեց Սուրենը:

— Ինչի, յես ինձ խելք չունեմ, ի՞նչ ես վախենմամ  
դուզ խոսքից:

— Իմացիր, վոր Սանդրովի դուզ խոսքի տակ  
ծուռ գործ կա, հա... այ, լավ միտղպահիր ասածներս,  
մի որ ել քեզ պետք կդա, նրա ասածներին շատ մի  
հավատա:

— Շաբահ, — գոռաց բարձր ձայնով Լեվոնը:

Բոլորը գործերը թողին ու վազեցին ծառի տակ,  
ծալպատիկ բոլորեցին ստվերի մեջ:

— Մենք ել գնանք, բիճա, ասածներս լավ միտղ  
պահիր, — ասեց Սուրենը և յերկուսով յեկան միացան  
միուսներին:

Սաթիկը և Սիրուշը առանձին խնամքով ճաշը  
բաժանեցին:

Հանաքով ուտում ելին, հացի մեծ մեծ պատառ-  
ներ բերաները զնում:

— Համա սովել եյի հա...

— Ես ինչ լավ կերակուր ե, քիչ և մնում մատր-  
ներս ել հետը ուտեմ:

— Ուտող համը զիտի, չուտողը ինչ զիտի:

Ճաշից հետո ամեն մեկն իր համար ստվերուա-  
տեղ ճարեց ու կանաչների վրա յերկարացավ հան-  
գոտանալու:

Կանաչք խմբերով ծաղկավոր գույնովույն չիթ  
զեյրաները հագներին, զնացին մորի քաղելու: Աննիկը  
նույնպես մի ծառի տակ նստեց հանգստանալու: Նա  
առաջին անգամն եր, վոր մասնակցում եր գաշտային  
աշխատանքներին: Դրա համար նրան և հրապուրում  
և վոգելում եր այդ աշխատանքը, մանավանդ բնու-  
թյան գրկում, փեղիքական աշխատանքից հետո նա  
լավ եր զգում:

Լեվոնը տեսավ, վոր Աննիկը մենակ և՝ մոտեցավ  
և տեղավորվեց նրա կողքին:

— Այստեղ յես ինձ շատ լավ եմ զգում. — ասեց

Աննիկը մի քիչ շփոթվեց նրա այդ հայացքից,  
բայց իրեն ևս հաճելի էր, վոր նա իր կողքին նստի:  
Գրիգոր բիծան զլուխը զրած թեփի վրա՝ ննջում  
եր: Սանդրոն կանչեց նրան:

— Արի, վոչխարի մածուն անուշ արա:

— Ծնորհակալ եմ, յես նոր ճաշեցի, դու անուշ  
արա, — ասեց Գրիգոր բիծան ու կրկին աչքերը փա-  
կեց, բայց քնել այլևս չկարողացավ, կարծես Սանդրոն  
մատը դրել եր նրա մարմնի ամենահիգանդուա տեղի  
վրա. Նորից նույն հարցը բարձրացավ նրա առաջ՝ ին-  
չու, ինչու մոտա կոլեկտիվ, մազերս սպիտակել են իմ  
սեփական արտի վրա աշխատելով: Քանի՝ քանի ան-  
գամ յես ել իմ վոչխարի մածունը հարեվաններիս և  
հրամցրել, յես ելի տերը իմ տավարի, արտի, իսկ ե-  
սոր սրտից ուզում են պոկել եղ բոլորը.

— Աննիկ, մենք միմյանց սիրում ենք, — ու նա-  
յելով չորս կողմը, վոր վոչ վոք իրենց չի նայում  
սեղմեց նրա ձեռքը: Աննիկի մարմնով մի դող ան-  
ցավ, նա սն միջապես իր ձեռքը փափցրեց ու գրպա-  
նից հանելով թաշկինակը՝ որբեց Լեվոնի ձականի  
քրտինքը:

— Ի՞նչը կարող ե մեզ բաժանել միմյանցից,  
իթի մենք սիրում ենք իրար, — ասեց նա խաղալով  
մի տերեկի հետ:

— Այս, մենք յերկուս ավելի լավ ենք հասկա-  
նում միմյանց, ավելի մոտ ենք իրար, բայց... ծանր

Հոգոց հանեց կեվոնն ու մտախոհ հայացքով նայեց  
Աննիկին:

— Լավ, կեվոն, գիտեմ, վոր կին յերեխա ունես.  
Դու ինքդ պետք ե վորոշես. նման զբությունն ալիս  
շարունակել անհնարին ե, չե՞ վոր չի կարելի սիրել  
մեկին, իսկ ապրել չսիրածի հետ, դա նշանակում ե  
խարել նրան. միթե դու դժվարանում ես վարոշել. այդ  
դեպքում մենք միմանցից կը աժանվենք, — ասաց Ան-  
նիկը՝ շեշտակի նայելով կեվոնին:

— Դա ինձ համար չափազանց գժվար ե.

Նրանց խոսակցությունն ընդհատվեց, վորովհե-  
տև նույն բռնկելին բարձրածայն ծիծաղով մոտեցան  
կանայնք՝ մորենու ճուղերը ձեռքբերին: Հաստ ճուղքերը  
կարմիր պտուղների ծանրության տակ ճռճռում ե-  
լին. Սաթիկը մի ճուղք առաջարկեց Աննիկին: Նա  
վերցրեց ու կարմիր պտուղները հատ-հատ պոկելով  
սկսեց ուտել Շուտով նրանց մոտեցան տղաները:

— Եղ լավ ե, մենք գնացինք չարչարվեցինք,  
մեր բաժինը խլում եք մեր ձեռքից, — ասաց Զարուհին  
հանաքով:

— Աշխատանքի բաժանում ե, մենք քնեցինք,  
հանգստացանք՝ դուք ել գնացիք մորի հավաքեցիք,  
իսկ քաղած պտուղներն ել հավասար բաժանում  
ենք, — վրա բերեց Ոհանը մորենու պտուղները բերանը  
դնելով:

— Եղպիսի հավասարության մենք դեմ ենք, ա-  
մեն մեկն իր աշխատանքի չտփ պիտի ուտի, — խոսակ-  
ցությանը միջամտեց Սաթիկը գլխի սպիտակ թաշկի-  
նակն ուղղելով. Նրա կարմրած այսերը մի վայրկյան  
գրավեցին Ոհանի ուշադրությունը:

Դըրիկոր բիձան, վոր արդեն գերանդին ձեռին  
արտի մեջտեղը հնձում եր՝ ձախ տվեց.

— Դե հերիք ա, որը մթնեց:

Լեռնը քիչ առաջվա խոսակցության աղդեցու-  
թյան տակ՝ ձեկ անգամ ել գաղտագողի նայեց Աննի-  
կին ու գերանդին վերցնելով՝ անցավ աշխատանքի.  
Նրան հետևեցին մլուսները, կանաչք ել վերցրին փոյ-  
խերը:

Նստած մնացին Աննիկն ու Զարուհին. Մարիա-  
մը փոցիս վերցրեց, զանգաղ քայլերով մոտեցավ  
փոցիսվորների բրիգադին. մի անգամ փոցիսում՝ ա-  
պա հետ եր դառնում ու նայում յերկուսին, վորոնք  
դեռ խոսում եին:

— Մարիամ, եղ ինչո՞ւ եղպիս կամաց ես աշխա-  
տում, — նկատեց նրա կողքի աշխատող կինը:

— Ի՞նչ անեմ, աղի ջան, գլուխս պտույտ ե գա-  
լիս, սիրոս խառնում ե, — կեղծ հիվանդ ձևանալով՝  
գեմքը թթվեցրեց Մարիամը և նորից աչքը գցեց գե-  
պի ծառի առակը, վորաեղ նստած ելին Աննիկն ու Զա-  
րուհին Ալպես մի քանի ըոպե աշխատեց, վերջը մո-  
տեցավ նրանց և ծալապատիկ նստեց նրանց կողքին  
ու սկսեց բարձր ձայնով գանգատվել, տրանջալ, վոր  
ինքը հիվանդ ե, միենույն ժամանակ ականջները որ-  
ուից՝ լսելու նրանց խոսակցությունը:

— 20 թվին գու յԵլ եյիր Յերեանի բանտում, —  
հարցրեց Աննիկը Զարուհուն:

— Այո, — պատասխանեց նա ու կարմրատակեց:  
Ապա մի խեթ հայացքով նայեց Մարիամի կողմն ու  
լոեց,

Համ, հաւ, յես քեզ հիշեցի: Չեր կամերան մեր  
կամերափի կողքին եր,—ուրախացավ Աննիկը:

Զարուհին միտյն գլխի շարժումով պատասխանեց:  
Նա չեր ցանկանում, վոր այդ խոսակցությունը շա-  
րունակվի Մարիամի ներկայութեամբ. նրան լավ եր  
ճանաչում, լավ գիտեր նրա բնափորությունը:

→ Դու ել ես բանա նստել—զարմացավ Մարի-  
ամի ու սկսեց նրան մի լավ զննել:

Բայց գիտես ինչու համար ե նստել, —հար-  
ցրեց նրան Զարուհին՝ նրա կասկածները ցրելու հա-  
մար, —հեղափոխության համար, են ժամանակ սա ջա-  
ել աղջիկ եր, համա լավ կոմունիստ, —ասաց Զա-  
րուհին՝ սիրալիբ հայացքով նայելով Աննիկին:

Յանի ընջի՞ համար աղջկան պիտի բանտ նըս-  
տեցնեն, —կասկածանքով նորից հարցրեց Մարիամը:

Աննիկն իր հերթին յերկար ժամանակ չեր հեռա-  
ցնում հայացքը Զարուհուց: Նրա հիշողության մեջ վե-  
րականգնում եր 20 թվականի Զարուհին, ափելի յե-  
րիտասարդ, վայելչակազմ, սել, խորը աչքերով, իսկ  
հիմա ինչքան փոխվել ե:

6

Մթնշաղն իջել եր քաղաքի վրա:

Հրացանների վերջին ճարճատյուները դադարել  
ելին: Քաղաքի փողոցներում խումբ-խումբ զինված  
մարդիկ ելին ման զալիս ու կասկածելի անձնավորու-  
թյան պատահելիս՝ վորոնց կասկածում ելին, թե բայլ-  
չիկներ են, ձերբակալում և ուղարկում հետախուզա-  
կան բաժինը:

Տներում մասսայական խուզարկություն եր կա-  
տարվում:

Աննիկը նստած իբենց սենյակում՝ մտատանջու-  
թյան մեջ եր: Մի ժամ առաջ, հազիվ-հազ կարողա-  
ցել եր հետապնդումից ազատվել և տուն գալ: Նա ըս-  
պասում եր մթնելուն, վորպեսզի գիշերով փախչի քա-  
զաքից: Նա գիտեր, վոր ապստամբությունը ճնշված  
ե և քաղաքում սկսվել ե Դաշնակցության վակիսանա-  
լին:

Եերկու-յերեք գիշեր անընդհատ սազմէնեղկոմի  
շենքում նա հեռախոսի մոտ հերթապահ եր յեղել: Աշ-  
քերի կոպերն անքնությունից ցավում ելին: Մտածում  
եր նաև այն մասին, թե՝ ինչ զըսության մեջ են մյուս  
ընկերները:

Մայրը կանգնած տղջկա դիմաց՝ թախանձում եր  
մի պատառ հաց ուտել բայց նա ուտելու վոչ մի ա-  
խորժակ չուներ, չնայած նրան, վոր յերկու որ եր բե-  
րանը մի պատառ հաց չեր դրել նրա գլուխը ծանրա-  
ցել եր մտքերից, բայց նրան ավելի տանջում ելին  
մոր տիսուր՝ հայացքները, վոր վոչ մի վայրկյան չեր  
հեռացնում իրենից: Մայրական սիրտը մղկտում եր,  
յերը նայում եր աղջկան: Յեվ արցունքներն աղջկան  
չցույց տալու համար՝ գոգնոցի վեշով ծածուկ սրբում  
եր աչքերը:

Ծեր կին եր նա, հիսուն տարին անց: Հազին ու-  
ներ սեվ շալից զելրա, կլանքի ծանը հոգսերն ու տան-  
շանքները դրշմված ելին նրա զեմքին: Մեծ վորդու-  
մահից հետո նա զլիին միշտ սեվ շալ եր կապում:   
Այս յերեք օրն ավելի շատ եր տանջլել Աննիկի հա-  
մար, մանավանդ վոր նա գիշերները առուն չեր յեկել:   
Հազար ու մի վատ մտքեր պղատորում ելին նրա սիրտը:

Յերբ բայլը կիկների ապստամբութլունը ճշշվեց՝  
Նրա մայրական սիրութ զգում եր, վոր աղջկան մի մեծ  
փորձանք եւ սպասում: Նա մտածում եր ինչ անել  
վորպիսվի աղջկա կյանքին սպառնացող վատնդը հե-  
ռացնի, աղատի նրան դահիճների ձեռքից: Աննիկի  
վեց տարիկան քուբը վաչինչ չեր հասկանում ալդ բա-  
ներից, բայց նա իր մանկական բնազդով զգում եր,  
վոր իրենց առնը ինչ վոր մի արտակարգ տխուր բան  
և պատահել: Նախում եր շուրջը, տեսնում ե, վոր մայ-  
քը լաց ե լինում, վոր Սննիկը լիրկու որ և տուն չի  
լիկել, այսոր լիկել ե, բայց հաց չի ուտում, չի խո-  
սում, իր հետ հանաքներ չի անում: Հայրը նույնպիս  
լուռ՝ վոչ վոքի հետ չի խոսում: Նա բարկացած, հոն-  
քերը կիտած՝ անընդհատ զնում-զավիս ե: Շուշիկը վա-  
խինում ե հոր բարկացած հայցքից: Նա հանկարծ  
մի ցուրտ զգաց մարմնի մեջ: Սենակի անկյունը նըս-  
տած, իր մանկական լրջությամբ նա դիտում եր բո-  
լորին, բայց իր մանկական ուղեղով չեր կարողանում  
իրեն տանջող այդ հարցերին պատասխան դանել: Նա  
մի անգամ փորձ արեց հարցնել մորը, յերբ նա թաց  
աշքերն եր սրբում, թե նա ինչու ի՞ լաց լինում,  
բայց մայրը վաչինչ չպատասխանեց ու անցավ խո-  
հանոց՝ Աննիկին ճաշ բերելու:

«Բայց ինչու այսքան ժամանակ Աննիկի ճաշը  
մնացել ե սեղանի վրա, չե՞ վոր նա սոված ե, խոկ կի-  
բակուրը սառչում ե, մտածեց նա, մուսեցավ սեղանին  
ու կերակրի ափսեն ավելի մոտեցըց քըոջը: Աննիկը  
ըստ յերեւութիւն, զգացվեց նրա ալդ վարմունքից  
ժպտաց նրա գիմքին ու հացի մի պատառ դրեց բե-  
րանք: Այդ բանը շատ ուրախացրեց Շուշիկին:

Սենակի դուռը ճռալրով բացվեց ու ներս մը-  
տավ Աննիկի ընկերութին՝ Մարգոն, կասն տակ մի  
փոքրիկ կապոց բռնած: Ընդհանուր կերպով բարեկե-  
րով բոլորին, ձեռի կապոցը դըեց թախախն ու աթու-  
ուը վերցնելով՝ նստեց Աննիկի կողքին:

— Աննիկ, շորերը բերել եմ, մութն ընկնելուն  
պիս հազիր և արի մեզ մոտ: Մեր անից քեզ կճանա-  
պարհենք, վոչ վոք չի կասկածի... մի մտածիր,—մտե-  
րիմ, ընկերական լիդանեակով ասեց Մարգոն:

— Յես իմ մասին չեմ մտածում: Յես վոր մաս-  
նակցել եմ հեղափոխական գաղտնի աշխատանքներին՝  
միշտ աչքի առաջ եմ ունեցել, վոր կարող եմ բան-  
տարկվել, դեռ ավելին... Բայց ինչ ե լինելու այս ծե-  
րունիների դրությունը, չե՞ վոր միակ աշխատող ձեռ-  
քը չես եցի, ստացած կողեկներով հազիր պահպանում  
եի սրանց գոլությունը,—հուզմունքից շրթունքները  
դողլուղարով պատասխանեց Աննիկը:

Հայրը մի բոսկ կանգ առավ ուղիղ Աննիկի դեմ  
շղիմաց:

— Նոր ես մտածում, վոր մեղ սովին ես մատ-  
նում, ինչ գործ ունեցիլ, վոր խառնվեցիր եղ գործե-  
րին, համ քո տունը քանզեցիր, համ ել մեր տունը  
— բարկացավ նա ու նալից աղջկան:

— Հերիք ե, հայրիկ, դրա մտսին խսիս, միե-  
նուքն ե դու չես կարող ինձ հասկանուլ մենք տարբեր  
մարդիկ ենք, դու կոմի մարդ չես, խոկ յես հանուն իմ  
դասակարդի շահերի՝ անում եմ այս զոհաբերությունը,  
— ասեց Աննիկը խրոխտ ձայնով ու դարձավ Մարգո-  
ւու:

— Աւզ, Մարգո ջան, գնա և ինձ սպասիր. — ու  
պինդ սեղմեց նրա ձեռքը:

Մարգոն դուրս յեկավ Աննիկի մոտից ծանր տը-  
պավորության տակ: Նա նույնպես չեր կարողանում  
հասկանալ, թե ինչից դրդված ընկերուհին մասնակ-  
ցեց ապատամբությանը: Խաղաղ, յերջանիկ կյանքը  
թողնել ու գնալ կամավոր կերպով իրեն վտանգի յեն-  
թարկել այդ անհասկանալի մեր իր համար: Բայց Աննիկը  
բոլորին այլ բնավագործություն ուներ: Դեռ աշակերտա-  
կան շրջանից նրա մեջ տարրորինակություններ կային,  
Բայց չնայած այդ բոլորին, ինչ գնով ել լինե՞լ պետք  
եր ազատել նրան, այսպես մտածելով Մարգոն տուն  
հասավ:

Հազիվ քսան բոպե եր անցել Մարգոի գնալուց  
յերբ քաշնակցական գինվորներից հինգ-վեց հոգի, գին-  
ված մառղերներով, հրացաններով՝ յեկան Աննիկին  
ձերբակալելու:

Զինված մարդկանց տեսնելուն պես՝ մոր վոտնե-  
րը թուլացան: Փոքրիկ Շուշիկը, աչքերն արցունքով  
լի, վախեցած մոր փեշերին կպավ: Հայրը մի թունու-  
հայացք գցեց ինկողների վրա: Զինվորներից յերկուսը  
մոտեցան ու լպիրշ հայացքով մառղերների խողովակ-  
ները Աննիկի քունքերին դեմ տվին:

— Չեմ փախչի, իզուր, եք ձեր քաջագործությունն  
այստեղ ցույց տալիս, — հեգնեց նրանց Աննիկը: Նրա  
լիրեսի գույնը թռել եր: Նա հուզված հագավ կապուլս  
մահուղից հին վերարկուն և արագ քայլերով առաջ ան-  
ցավ գեպի դուռը: Նա սիրտ չարավ հետ նալելու ծը-  
նողներին: Դոնից դուրս գալիս նրա ականջին հասակ  
Շուշիկի լացի ձախը:

Ամբողջ ճանապարհին նրա աչքից չեր հեռանում  
էոր թունու հայացքը, մոր տանջված դեմքը, և կար-  
ծես նոր միայն զգաց, թե ինչքան ուժգին կերպով  
սիրում եր մորը: Նրան թվաց, վոր բոլորովին կորցը-  
րեց սիրելիներին, վոր ալես նրանց լերբեք չի տես-  
նելու: Ինչպես նա կցանկանար այս գիշեր քնել փա-  
փուկ անկողնում, չե վոր ալնքան հոգնել եր, հոգնել  
եր վոչ միայն հոգեպես, ալյկ ֆիզիքապես: Հուզմուն-  
քից շրթունքները դողացին: Բայց վոչ, վոչ, նրա մեջ  
բարձրացավ մի նոր զգացում: Չե վոր այդ զոհաբե-  
րությունն անում ե հանուն հեղափոխության: այդ գի-  
տակցությունը նրան ավելի ամրապնդեց:

Ճանապարհի կիսին զինվորներից մեկը հանկարծ  
բռնեց Աննիկի կղակից:

— Մինչև հիմա բայց ների հետ ելիր, իսկ հի-  
մա մեղ ևս պատկանում — ասեց ու լպիրշ կերպով ծի-  
ծաղեց:

Աննիկը բարկացած հայացք նետեց նրա վրա ու  
հազիվ կարողացավ զայրույթը զսպել. զվիանքով աջ  
ձեռքով հրեց նրան մի կողմ: Նա բարկությունից շըր-  
թունքներն եր կրծոտում: Մի բուռն ցանկություն ա-  
ռաջացավ նրա մեջ — տեսնել Արամին, լսել նրա ձայ-  
նը. լմբրեք, յերբեք նա նրան այդպես չեր սիրել, վոր-  
քան հիմա, իերը շըջապատված ե այդ գարշելի մարդ-  
կանցով.

Նրանք կանգ առան բանտի առաջ: Յերկաթե զըր-  
ները բացվեցին ու Աննիկին ներս ընդունեցին: Բան-  
տի մռայլ պատերը նրա վրա ցնցող տպավուռթյուն  
թողեցին:

Նրան սոռացնորդեցին բանտապետի սենյակ, Նա

չեր հավատում իր աչքերին: Յերեք ընկերն ել այդտեղ են, պատառուած շորերով. հցուծված: Աննիկի սիրտն ուրախությունից արօփում եւ Նրան թվում եւ, վոր լեր կար, շատ լերկար ժամանակ չի տեսել իր ընկերներին, Այդ լերեքի մեջ եւ Արամը: Ինչքան ենա փոխվեր ճակատը վիրավոր, արյունը չորացած վրան, մուզերը զգգլված, գեմքը գունատ ու մտախոն:

Աննիկը մի քայլ եւ անում դեպի նա, ուզում եւ փարվել նրա գոսկը և կարուսն առնել:

Բայց ինչո՞ւ վաչ մեկը չի նախում իրեն, անգամ Արամը, վոր նրան տեսնելուն պես լերեսը շուռ տվեց դեպի պատի կողմը: Ի՞նչ եւ պատահել մըթէ նա այլ ևս չի սիրում... Վոչ, այդ անկարելի լիւ նրա սիրտը սկսում եւ ուժգնորեն բարախել:

— Դու ել ես մասնակցել ապստամբությանը, — հարցնում եւ բանդապետը՝ աչքերը խոժողելով Աննիկի վրա: — Սրանց հետ զո՞ւ լիլ ես գնդակ արձակել մեզ վրա, — շարունակում եւ նա՛ ձեռքալ ցուց տալով լերեք բայց կիկներին:

Աննիկը հանկարծակի գալով ալու հարցից՝ հարցական կերպով մերթ նայում եւ իր ընկերներին, մերթ բանդապետին, ու գլուխը կախում եւ:

— Ի՞նչո՞ւ լիս լուել լեզուդ պատանձգել եւ, ինչ եւ, չես պատասխանում, — նորից ձախնը բարձրացնելով դիմում եւ բանտապետն Աննիկին:

Բարկությունից շրթունքները գողում ելին: Աննիկի լուռեթյունը նրան ավելի լեր կատաղեցնում:

— Ի՞նչ ե՞ւ բոլորդ խոսք մեկ վորոշել եք չիսո՞ւ բայց լիս ձեզ խոսեցնել կտամ, — բոռունցքը ցուլց տարով սպառնում եւ նա:

— Եես նրանց չեմ ճանաչում, — պատասխանում եւ Աննիկն հագիստ լեզանակով ու աչքի տակից նայում ընկերներին:

— Սրան նստեցը ք առանձին կամերայում, հետո խոստովանեցնել կտանք, — խստիվ կարգադրում բանդապետը:

Աննիկը գունատվեց, զեմքի մկանները կծկվեցին բայց նա անգրգովելի մնաց: Նա վերջին անգամ նայեց լինկերներին և հանդիպեց Արամի հայացքին: Նա իր հայացքով հավանություն եր տալիս նրա պատասխանին ու քաջալերում: Աննիկը սրտապնդվեց ու թեթև ացած գուրս լեկավ սենյակից: Նոր միայն կարծես հաւկացավ, թե ինչո՞ւ լեր այդ սառը վերաբերմունքը գեպի ինքը: Նա չեր համանում, վոր Սրամն այդպիս վարվեց միայն նրա համար, վորպեսպի աղատի իրեն՝ Աննիկին:

Առաջին գիշերը մնալով մենակ կամերայում՝ նտուրուո զգաց, անմիջապես պառկեց չոր թախտի վրա ու քննեց:

Առափուտ վաղ հերթապահը նրան զարթեցրեց Անա թե՞ ինչ ինչը բանտարկված ե.. Թնը մեջ վոշինչ չեր զգացել թե ինքը վորտեղ եւ դժոնվում: Հերթափափի ներկայությունը միայն նրան հիշեցրեց բոլոր գեպքերը, իւր գրությունը: Անմիջապես հիշեց, վոր Արամը նույնպես այսուհետեւ, մըուս կամերայում, նույն վիճակում:

— Ի՞նչ կա, ինչո՞ւ լիս լեկեր — հարցրեց նա ու հարցական կերպով նայեց նրան:

— Այդպիս եւ բանտի որենքը, — պատասխանեց հերթապահը ու կամերաի դուռը ծանր կողպեքով կողպելով գուրս գնաց:

Մնաց մենակ Աննիկը, նա չգիտեր ինչ անել:

անել Մերթ մոտենում եր նեղիկ պատուհանին, մերթ ասֆալտի հատակի վրա հետ ու առաջ գնում: Ժամանակը շատ դանդաղ եր անցնում: Հազար ու մի միտք պաշարում եր նրա ուղեղը: Նա յերբեք, յերբեք չեր կարծում, վոր ապատամբությունն այդպիսի վախճան կունենա, իսկ Արամը, ինչ եր մտածում նա հիմա:

Այդպես ծանր մտատանջութքուների մեջ անցավ առաջին որը, Դժվար եր հաշտվել ստեղծված դրության հետ, բայց նա շուտով ընտելացավ բանտի կանքին:

Անցավ մի ամիս: Մի որ սպասուին յեկավ ու հայտնեց.—

Պատրաստվիր, Աննիկ, այսոր ձեր դատն և լինելու:

Աննիկն ուրախացավ, վոր վերջապես վերջ կը տրվի անորոշությանը: Սկսեց շորերը կարգի բերել:

Հուկիսի շոգ որերից եր Ռովա ամնաշող ժամանակը: Կարծես վերկից լրակ եր թափվում, փողոցները գատարկ եյին, ով կարող եր փողոց դուրս գալ այդ շոգին: Բայց լերը լուր տարածվեց, վոր չորս բայլերին այսոր դատում են՝ խանութպանները գուներից դուրս եյին հանում վլուխներն ու առանձին հընդունքով նայում: Փողոցների այս ու այն անկյունում խումբ խումբ մարդիկ, քաղքենուն հատուկ հետաքրքրությամբ նույնպես սպասում եյին, թե յերբ են բերելու բայլերիկ բանտարկալներին, դա նրանց համար մի տեսարան և, սենսացիա, վոր կարող եր նրանց թմրած ուղեղը շարժել:

Չորս հոգի եյին, նրանց միջ եր և Աննիկը: Միական ամսվա բանտարկված կյանքը թողել եր իր կնիքը նրա

դեմքին—գունատվել ու նիհարել եր, աչքերը փոսն ընկել: Քայլում եր Արամի կողքով:

Բան սրբալներին արգելվում եր խոսել միմանց հետ: Գուցե վերջին անգամն ե, վոր յերկուսով կողք-կողքի գնում եյին: Իրենց ամեն մեկի սրտում շատ բան կար կուտակված, շատ բան կար միմյանց հաղորդելու, բայց հնարավորություն չունելին միմանց հետ խոսելու: Յերբեմն Աննիկը գտղտագողի նաւում եր Արամին ու նրա սիրան ավելի յեր ալեկոծվում: Բայց ինչու Արամը վոչ մի անգամ գլուխը չի բարձրացնում, չի նայում իրեն: Ինչու յե նա այդպես մտախոհ, միթե դաշնակցական դատարանի սարսափին և ազդել: Վոչ, վոչ, նա այդպես թուլամորթ չե,

Դատարանի շենքի առաջ հավաքված եր մեծ բազմություն:

Ծառկն անցավ բերներերան՝ թե բերում են բալշեկներին:

Բազմության միջից ամեն մեկն աշխատում եր առաջ անցնեն փորպեսդի ավելի լով տեսնի նրանց:

Դատարանում Աննիկն իրեն ավելի հանգիստ եր զգում: Դատարանի նախագահի այն հարցին, թե՝

— Դու լերիտասարդ, 18 տարեկան որիորդ, գուցե բայլերիկները քեզ խարել են ուրիշ նպատակների համար:

Աննիկն առանց տատանվելու պատասխանում եւ Յես ինքս իմ ներքին համոզմունքով բայլերիկ մ և զիտակցորեն կովել եմ ու կովելու յիմ դաշնակցին իշխանության դեմ:

— Անա թե ինչ,—քթի տակ ինքն իրեն խոսեց

նախագահը և սրած բեխերը՝ մի յերկու անգամ վալութելուց հետո՝ շարունակեց կծու հեղինանքով.

— Ու լեռն դու ավելի վտանգավոր ես մեզ հաւաք, քան քո մյուս ընկերները:

Մի բոպե Աննիկն այլալլից նըտ այդ հարցից, նա կասկածեց, թե չինի՝ ավելորդ խոսք ե թոցըել բերանից, բայց ներքուստ մի ձայն թելողըում եր, վորձիշտ ես պատասխանել այդպիս են վարվում, վորպիսպի իրենից մի գաղտնիք կորզին:

— Դուցե և այդպիս ել ե, — հեգնեց նա.

Նըտ այդ պատասխանը դուր չեկավ արտակարգ դատարանին: Յերեքը խորհրդավոր կերպով միմէանց են նայում: Ամենից շատ կատաղում ե նախագահը: Նա, վոր և պոլկովնիկ եր՝ կարծես նոր միացն զգաց իր փայլուն ուսաղիբների ուժը՝ և հրամալից, վոր ներս բերեն մեղաղբյալ Արամ Սահնին:

Արամի անունը լսելուն պես Աննիկի սիբալը ըստ կաց արագ բարախել նա մինչև ականջները կարմրեց: զգում եր, թե ինչպես այտերը այրվում են, զգում եր, վոր ինթե մի վայրկան թուլանա և չկարողանա հուզմունքը զսպել կարող ե ընկերներին մատնել: Այդ միտքըն ավելի լիբ տանջում նըտան, և իր հուզմունքը թափնելու համար՝ նա կը թուառում եր շրթունքները:

Գալիք ե Արամը Նըտանց իրկուսի հոյացքները հանդիպում են միմյանց: Արամը շփոթվում ե, և անմիջապես ինքն իրեն հավաքելով նայում ե գատավորին: Դատարանն իր ամբողջ կաղմով հրճվում ե այն տեսարանից, և հաղթություն տարած մարդու նման պոլկովնիկ դատավորը, դլուխը քիչ առաջ բերելով դարձյալ հեղինական յեղանակով դիմում ե Աննիկին:

— Ի՞նչ հարաբերության մեջ եք յեղել մեղակըրյալ Աննիկի հետ, գուցե նըտք ոգտագործել եք ձեր անձնական կրքերին բավարարություն տալու համար, — ու բերանը բանալով՝ քահ-քահ ծիծաղում ե ծիծաղում են նըտ հետ լպիրը կերպով նաև դատարանի մյուս անգամները:

Արամի արյունը գլուխն ե տալիս. մի բոպե նըտքում ե վոր պատերը շուր են զալիս, նա մի քալլ ե անում դեպի դատավորի սեղանը.

— Ո՞վ ե ձեզ իրավունք տվեր—ու չկարողանալով այլես շաբունակել՝ բարձրացնում ե բռունցքը նըտանց վրա:

Անմիջապես մոտենում են զինվորներն ու նըտանի կողմ քաշում: Արամը շփում ե ճակատը, մեկ ել նայում ե Աննիկին:

— Դատարանին իրավունք չե վերապահված իմանալու, թե ում հետ եմ ապրում ենս, — պատասխանում ե Աննիկը մի փոքր շփոթվելով:

